Տեղեկացնում **ենք**, **որ ՌԴ ԱԳՆ Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտը** (**ՄՄՀՊԻ /МГИМО/**) /Առդիր 1/ և **ՌԴ ԱԳՆ Դիվանագիտական ակադեմիան** /Առդիր 2/ հայտարարում են 2025-2026թթ. ուսումնական տարվա ընդունելություն:

2025-2026թթ. ուսումնական տարվա համար **ՄՄՀՊԻ-ի** կողմից ՀՀ-ին հատկացված քվոտաների ընդհանուր քանակը 10-ն է՝ 5 բակալավրիատի, 4 մագիստրոսական և 1 ասպիրանտուրայի ծրագրերի դիմելու հնարավորությամբ:

ՌԴ ԱԳՆ Դիվանագիտական ակադեմիայի կողմից 2025-2026 ուսումնական տարվա ընդունելությունը նույնպես նախատեսվում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ծրագրերով: **ՌԴ ԱԳՆ Դիվանագիտական ակադեմիան** տրամադրում է սահմանափակ քանակությամբ տեղեր՝ կախված ընդունելության քննություններում դիմորդների արդյունքներից:

Հայտնում ենք, որ ՀՀ-ին հատկացված քվոտաներով նշված ԲՈՒՀ-երում ուսումն անվճար է, սակայն ուսումնառության ամբողջ ընթացքում կեցության հետ կապված ծախսերը, ինչպես նաև ճանապարհածախսը պետք է հոգան մասնակիցները: Հանրակացարաններում բնակությունը, տեղերի առկայության պարագայում, նույնպես վճարովի է:

Վերը նշված ԲՈՒՀ-երի ուսումնական ծրագրերին դիմելու համար ՀՀ ԱԳՆ փաստաթղթեր ներկայացնելու **վերջնաժամկետն է** 2025**թ. ապրիլի** 21-**ը**: Անհրաժեշտ փաստաթղթերը պետք է փոխանցվեն secretariat@mfa.am էլ. հասցեին:

ՀՀ ԱԳՆ ներկայացվելիք անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ.

- դիմում ՀՀ ԱԳ նախարարի անունով
- ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը
- ատեստատի պատճենը (բակալավրիատի դեպքում), դիպլոմի պատճենը, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի դեպքում՝ ներառյալ ներդիրները
- արական սեռի դիմորդների պարագայում՝ կցագրման վկայականի կամ զինվորական գրքույկի պատճենները
- ինքնակենսագրություն՝ շարադրված ազատ ոճով
- 2 գունավոր լուսանկար 3X4 չափսի:

ԱՌԴԻՐ 1

ՌԴ ԱԳՆ Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտն (ՄՄՀՊԻ /МГИМО/) առաջարկում է կրթական ծրագրեր հետևյալ ուղղություններով.

1. Միջազգային հարաբերություններ (բակալավրիատ, մագիստրատուրա)
2. Արտասահմանյան տարածաշրջանագիտություն (բակալավրիատ, մագիստրատուրա)
3. Տնտեսագիտություն (բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա)
4. Իրավագիտություն (բակալավրիատ, մագիստրատուրա)
5. Ժուռնալիստիկա (բակալավրիատ, մագիստրատուրա)
6. Գովազդ և հանրային կապեր (բակալավրիատ, մագիստրատուրա)
7. Ֆինանսներ և վարկ (մագիստրատուրա)
8. Պետական և համայնքային կառավարում (մագիստրատուրա)
9. Քաղաքագիտություն (ասպիրանտուրա)
10. Տնտեսագիտություն (ասպիրանտուրա)
11. Իրավունք (ասպիրանտուրա)

Ընդունելության քննությունների վերաբերյալ տեղեկատվությունն անմիջապես փոխանցվելու է դիմողների կողմից ներկայացված էլ. հասցեներին:

Կրթական ծրագրերին ավելի մանրամասն կարելի է ծանոթանալ https://abiturient.mgimo.ru/foreigners հղմամբ:

ԱՌԴԻՐ 2

ՌԴ ԱԳՆ Դիվանագիտական ակադեմիան առաջարկում է կրթական ծրագրեր հետևյալ ուղղություններով.

Բակալավրիատ (միայն առկա եղանակով)

1. Միջազգային հարաբերություններ («Միջազգային հարաբերություններ և արտաքին քաղաքականություն» ծրագիր): Քննական առարկաներն են՝ ռուսերեն, օտար լեզու, պատմություն:
2. Տնտեսագիտություն («Արտաքին տնտեսական գործունեություն» ծրագիր): Քննական առարկաներն են՝ ռուսերեն, օտար լեզու, մաթեմաթիկա:
3. Իրավագիտություն («Միջազգային իրավունք» ծրագիր): Քննական առարկաներն են՝ ռուսերեն, օտար լեզու, հասարակագիտություն:

Ընդունելության քննությունները կանցկացվեն հեռավար ձևաչափով ս.թ. հուլիսի 18-ից հուլիսի 25-ը: Ուսման տևողությունը՝ 4 տարի:

Մագիստրատուրա (առկա եղանակով)

1. Միջազգային հարաբերություններ («Միջազգային տարածաշրջանագիտություն»): Քննական առարկաներն են՝ ռուսերեն, օտար լեզու, մասնագիտական առարկա:
2. Տնտեսագիտություն («Էներգետիկ դիվանագիտություն և էներգետիկ տնտեսագիտություն», «Միջազգային բիզնեսում նորարարությունների տնտեսություն» ծրագրեր): Քննական առարկաներն են՝ ռուսերեն, օտար լեզու, մասնագիտական առարկա:
3. Իրավագիտություն («Միջազգային իրավունքը Ռուսաստանի արտաքին քաղաքականության մեջ» ծրագիր): Քննական առարկաներն են՝ ռուսերեն, օտար լեզու, մասնագիտական առարկա:

Ընդունելության քննությունները կանցկացվեն հեռավար ձևաչափով ս. թ. հուլիսի 28-ից օգոստոսի 15-ը: Ուսման տևողությունը՝ 2 տարի:

Մագիստրատուրա (հեռակա եղանակով)

4. Կառավարում («Արտաքին տնտեսական գործունեության կառավարում» ծրագիր): Քննական առարկաներն են՝ ռուսերեն, մասնագիտական զրույց:

Ընդունելության քննությունների առաջին փուլը կանցկացվի հեռավար ձևաչափով ս. թ. հուլիսի 28-ից օգոստոսի 15-ը, իսկ երկրորդ փուլը՝ նոյեմբերի 17-ից 21-ը: Ուսման տևողությունը՝ 2.5 տարի:

Ասպիրանտուրա (առկա եղանակով)

1. Պատմական գիտություններ («Միջազգային հարաբերությունների և արտաքին քաղաքականության պատմություն» գիտական մասնագիտացում): Քննական առարկաներն են՝ փիլիսոփայություն, օտար լեզու, մասնագիտական առարկա:
2. Տնտեսագիտություն («Համաշխարհային տնտեսագիտություն» գիտական մասնագիտացում): Քննական առարկաներն են՝ փիլիսոփայություն, օտար լեզու, մասնագիտական առարկա:
3. Իրավունք («Միջազգային իրավական գիտություններ» գիտական մասնագիտացում): Քննական առարկաներն են՝ փիլիսոփայություն, օտար լեզու, մասնագիտական առարկա:
4. Քաղաքագիտություն («Քաղաքական ինստիտուտներ, գործընթացներ, տեխնոլոգիաներ», «Միջազգային հարաբերություններ, գլոբալ և տարածաշրջանային հետազոտություններ» գիտական մասնագիտացումներ): Քննական առարկաներն են՝ փիլիսոփայություն, օտար լեզու, մասնագիտական առարկա:

Ընդունելության քննությունները կանցկացվեն հեռավար ձևաչափով ս.թ. սեպտեմբերի 8-ից 19-ը: Ուսման տևողությունը՝ 3 տարի:

Կրթական ծրագրերին ավելի մանրամասն կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով՝
https://www.dipacademy.ru/admission/admission-foreign/: